

ցաւ, դատարկ կենօք հրաժարելով՝ մա-
նաւանդ թէ ըսենք զզուելով՝ երաժշշ-
տութենէ, այն որ զինքն անմահացոյց .
միայն 1844ին մի անգամ մը ևեթ իր
անգործութենէն երևալ ցըցուց, հրա-
տարակելով՝ ութ տարի առաջ յօրի-
նած գեղեցիկ կայր առ խաչին աւագ
ուրբաթու երգը : Եւ 1845ին իր առջի
ամուսինը վախճանելով, երկրորդ ան-
գամ Տ. Օ. Բէլիսքէի հետ ամուսնա-
ցաւ: 1848ին Պոլոնեայէն ելլալով և քա-
նի մը տարի Ֆիորենցա անցընելէն վեր-
ջը 1855ին դարձաւ 'ի բարիդ ուր ան-
ցուց մնացած կեանքը : Եւ սակայն թէ-
պէտ այս միջոցին իր հանճարոյն փառ-
քը և գովեստը չի զլացուեցաւ, բայց և
այնու չիփոխեց Ռոսսինի իր ընթացքը
և հանճարոյն նոր արգասիքներ չընծա-
յեց հասարակութեան, բաց 'ի քանի
մը պղտի յօրինուածներէ. ինչպէս Սըր-
բազան Պապին Պիոսի թէ խնդրանգը
շինած պատարագը, և այլ քանի մը եր-
գեր. դարձեալ այլ և այլ պատառներ
կէս տպազրեալ և կէս անտիպ. և 'ի
վեր քան զատնկ՝ նոր պատարագ մը,
զոր վարժապետը ուզած չէ բնաւ տպա-
զրել, այլ արուեստագէտք կը վկայեն
թէ հիանալի գեղեցկութեամբ լի է:
վախճանեցաւ դարուս առաջին երևե-
լի երաժիշտ հանճարն Ռոսսինի 1869
նոյ. 13ին . բայց քանի տարօրինակ են
մէկմէկէ իր աշխարհի մուտքը եկբէն.
աննշան ծնողաց զաւակ, ոչ ոք իմացաւ
իր ծնունդը և խօսեցաւ վրան բաց 'ի
իր ծնողացմէ և յազգականաց. իսկ իր
մահը ընդ աշխարհ ամենայն հնչեց.
աննշան մտաւ յաշխարհ, բայց գիտա-
ւորի մը պէս իր ծածկուելէն վերջն ալ
լուսաւոր գէսին երկայնքը դարուց վրայ
տարածած ծածկուեցաւ:

ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴ

ՆԱՄԱԿ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Մամացը :

(Տես Երես 78)

Այսօր, ազնիւ օրիորդ, մեր պատմու-
թիւնը սկըսելով նոր բառի մը պիտոր
ծանօթանանք : Կ'ախորժէի լուութեամբ
անցնել զայն, որովհետև ոչ աղուոր է
և ոչ աղէկ շինուած . սակայն կարելի չէ:

Գիտես որ մեր մարմարն ներսը ե-
ղած ամեն բաներուն անծանօթ կնքա-
հայրները, ստամոքսէն ելած խիւսին
խախաց անտեղի անունը տուեր են :
Ասոր վրայ բաւական խօսեցանք, և դու-
ալ կը ճանչնաս զայն : Կ'երեսայ թէ իր
երեսոյթը անոնց ախորժելի անցեր է, ո-
րովհետև պղտի փոփոխութեամբ մը նո-
րէն անոր դարձեր են, երբ հարկ եղեր
է խախացին ոգին մլրտել, այն օդտա-
կար մասը որ արեան մէջ պիտոր երթայ
խառնուի, զոր մենք մէջերնիւ՝ ուտե-
լեաց ուկին կոչեցինք . և զայն կոչեր են
Մամաց : Այս բառը ինչպէս որ ինծի
աւանդեցին՝ նոյնպէս ես ալ քեզի կ'ա-
ւանդեմ, ու ձեռքս կը լուամ:

Քեզի զուրցած էի որ գտնուելու էր
միջոց մը՝ մամացը աղեաց խողովակէն
գուրս հանելու : Այդ միջոցը շատ պարզ
է : Այն պղտի աւելածուաց՝ որոնց վրայ
վերջին անգամ խօսեցանք, մեծ գունդ
մը բոլոր նրբաղիքին երկայնութեամբը,
և զլիսաւորաբար առաջնաղիքին շրջա-
կայքը, պատերազմի կարգով շարուած
կեցած են : Հոն, հազար ու մէկ պղտի
խողովակներ, ամենայն ուղղութեամբ
դէպ 'ի աղիքին երեսը կու գան և անոր
մաշկը ծակ ծակ կ'ընեն, որոնք՝ ինչպէս
մշտաբաց կոկորդներ՝ քանի որ մամա-
ցին կաթլիկները կը ձևանան, հետ-
զհետէ կը ծծեն զանոնք : Ասոնց անու-
նը մամացարեր խողովակք անուաներ
են: Քեզի ըսած եմ թէ աղեաց ներսի

դին առաձգական տախտակներ կան՝ որ խախացին ճամբան կ'արգելուն, ու կը բռնադատեն զայն շարունակ կանկ առնելու։ Նաև ասոնք անանկ բազմաթիւ են, և մորթն ալ որ զիսողովակը ներսի դիէն կը պատէ՝ այնչափ ծալք ծալքի վրայ կը ծալլուի, որ եթէ մեծ ստոլի մը վրայ ծայրէ՝ ի ծայր զայն տարածեն, այնչափ տեղ կը դրաւէ՝ որչափ միւս մորթը՝ որ ինչպէս քեզի ալ ծանօթ է, դրսէն բոլոր մարմինը կը պատէ։ Ուրեմն, մամացաբեր անօթները բոլոր այս ծալքերուն մէջ սահելով կը ցրուին, և այնպէս մինչև խախացային խիւսին սիրառ կը համնին, որուն և ոչ մէկ ամենամանը կաթիլիկ մը կարող է իրենց ձեռքէն պլրծիլ։ Անանկ աշխուժութեամբ կ'աշխատին, որ գեռ խիւսը ստուարաղիքին չհասած՝ բոլորովին կը մաքրեն, և երբ ան իր մուտքը խափանող դուռը կը բռնադատէ ու մէջը կը մտնայ, յետ որոյ դուռը նորէն կը դոցուի ու թոյլ չխտար որ իր ճամբէն ետ գառնայ, մամացը արդէն շատ հեռու է անկէ։ Այն պղտի խողովակներուն մէջ մտած է, ու մերձաւորէ մերձաւոր միշտ վեր ելլով, դէպ ՚ի սիրտ կը ճանապարհորդէ՝ ուր իրեն կը սպասեն։

— Հապա մնացորդը ի՞նչ կ'ըլլայ։

Մնացորդը, սիրելի օրիորդիկ, պատմութիւն չունի։ Այսպիսի է այն ամենայն բանի վախճանը կամ պատիժը, եթէ լաւ ևս կ'ախործիս, որ բանի մը չծառայեր։ Նոյն բանը կը հանդիպի նաև առհասարակ այն ամենայն մարդոց որ ծոյլ են՝ եթէ զիսով, եթէ ձեռքով, և եթէ սըրտով։ ոյք աշխարհէս կ'անցնին՝ առանց անոր բան մը տալու։ Ինչպէս աշխարհիս անօգուտ և ամօթալի ծանրութիւն մը ըլլային, անանկ բնութիւնը երր ժամը գայ իր ծոյէն կը մերժէ զանոնք, և այնպէս կը լմննայ պատմութիւնին, ալ վրանին չխօսուիր։ Սակայն այն մէկը որ յօդուտ ընդհանուր մարդկութեան մատոյց իր ծառայութիւնն, թէպէտ և ամենապոքը, այն մէկն որ պղտի զիւտով մը, կամ օգտակար ձեռնարկութեամբ մը, կամ բարի օրինակով մը, և կամ

արդար գաղափարով մը կրցեր է ճոխացընել այն ընդհանուր ժառանգութիւնը՝ որ մարդիկ ազգէ ազգ մէկմէկու կ'աւանդեն, այն մէկն որ ճշմարտութեան մը յաղթանակելուն ձեռք մը կարկառած է, անիրաւութիւն մը մարած է, մէկու մը հոգւոյն մէջ գիտութեան ու պատույ սուրբ կրակը վառած է։ այնպիսի մէկ մը այս կերպով չելլեր աշխարհէս, որ իրմէն բան մը ընդունած է։ Եթէ ամեն անգամ գիրքերը այնպիսի անձի մը վրայ չեն խօսիր, ինչու որ ամեն ժամանակի և ամեն աշխարհաց գործունեայ անձանց բազմութեանը մէջ կորսուած է, սակայն մարդկային պատմութեան գործաւորներէն մէկն եղած ըլլալով, այն պատմութիւնըն ալ նոյն խսկ իր անձին պատմութիւնն է, թէ և իր անունը մէջը յիշուի, կամ ոչ։

Ուրեմն այս քաջ մամացին ճակատագրոյն ետևէ երթանք, որ մարմնոյն կեանքը մնուցանելու կարողութիւն մը ստացաւ, որուն իւրաքանչիւր կաթիլը արիւն պիտոր փոխուի, և այն արեան մաս պիտոր ըլլայ՝ որ մեր սրտին բարախելուն պատճառ է, մեր անգամները կը մնուցանէ և մեր ըղեղին թելիցը գործօնէութիւն կը տպաւորէ։ Մնացորդին թոյլ տանք անձանօթ կերպով ճամբորդութիւն մը լմնցնելու՝ որուն ետքը շահ մը չկայ։

Պէտք է ըսել քեզի նախ թէ մամացը աղիքէն որ կ'ելլէ՝ գրեթէ կաթի նման է։ Սպիտակ ու քիչ մը պարարտ հոյզ մըն է այդ, զոր մոտանց զիտելով կաթի շիճուկ կը նմանի՝ որուն մէջ բազմաթիւ ամենամանը գնտիկներ կը լողան։ Եղեր են անանկ հետաքրքիրք ոմանք՝ որոնց փորձութիւնը ամեն բան զիտնալ ուղեն է, թէ և ստէպ տուժել հարկ ըլլայ, որ իրենց լեզուին ծայրը մէջը համարձակեր են խոթելու. անոնց չնորհքովը կը ընամ քեզի ըսել հիմա, եթէ գիտնալ կ'ախործիս, որ մամացին համը քիչ մը աղային է։

իր այս վիճակիս մէջ մամացը, նոր

ծնած տրիւն է, եթէ այս կերպով ինք. զինքս կը համամաղէկ հասկըցնել, բայց անանկ արիւն՝ որուն դաստիարակութիւն. նը զեռ չէ եղած, ըսեմ, նմանութիւնը շարունակելու համար։ Արեան բոլոր տարերքը արդէն մէջը կը գտնուին, սակայն խառն՝ 'ի խուռն և մէկ մէկու հետ խառնուած, անանկ որ կարելի չէ զեռ զանոնք ճանչնալ։ Զարմանալի եղած բան, որուն մեկնութիւնն իսկ քեզի տալ չեմ կրնար, այն բազմութիւ գաղտնիքներէն մէկն ըլլալով՝ որ լուելեայն կը կատարուին 'ի մեզ. այս նորածին արեան կրթութիւնն է՝ որ բոլորովին ինքնիրեն կը սկըսի կատարուիլ զինքը բերող անօթոց մէջ։ Զինքը կազմող տարերքը ինքնիրենուն կը սկըսին կարգաւորուիլ և ճամբուն մէջ շարուիլ։ Միով բանիւ մամացարեր անօթոց միջէն ելլելու ատեն՝ մամացը՝ շատ աւելի արեան նմանութիւն կը բերէ քան թէ 'ի սկզբան անոնց մէջ մտած ժամանակը, և կարելի չէ զուրցել ճշդիւ թէ ինչպէս կ'ըլլայ այդ բանը։ Իր ճերմակ երևոյթը վարդագոյն երանգ մը կ'առնու, և եթէ մէկը անանկ ատեն օդու ցուցընէ՝ կը տեսնէ որ թեթև մը կը կարմրի, ինչպէս թէ ուզենար հասկըցնել դիտողին իր ապա ըլլալիքը։

Արդէն զիտես որ բոլոր մեր աւելածուք մէկմէկու հետ միանալով, վերջապէս մէկ հատիկ մեծ խողովակի մը մէջ կը միանան, որ կրծոց խսդովակ կը կոչուի։ Մամացին աւելածուք, ինչպէս նաև իրենց ընկերները, անոր մէջ կը հասնին, և հոն այս մեր խեղճ բարեկամ մամացը՝ մարմնոյն բոլոր փրփուրին հետ խառնուած կը գտնէ ինքզինքը, ինչպէս կ'ըլլայ նաև մարդկանցմէ անոնց՝ որ ինքզինքին ուրիշին բարւոյն կը զոհեն։ Սակայն այդ՝ վայրկենական փորձ մըն է. քայլ մը անդին կրծոց խողովակը՝ բոլորը մէկտեղ սրտին մօտ եղած մեծ երակի մը մէջ կը լեցընէ, և արիւնը շատ չնեղուիր իր վերաբերեալ մասը ընտրելու։

Հոս, ազնիւ աշկերտուհիս, մեր պատ-

մոթեան տոաջին մասին վերջը կը հառնիք։ Ուտել՝ ինքզինքը մնուցանելըսել է. կամթէ մարմնոյն ամենայն մասանց այն գոյացութիւնները հոգալ՝ որոնց պէտք ունին, իւրաքանչիւրը իր պաշտօնը կատարելու համար։ Այդ գոյացութիւնները, բերանը՝ իրենց կոշտ վիճակի մէջ կ'ընդունի, և փորոտեաց խողովակը զանոնք կը պատրաստէ. արիւնը զիրենք կը բաշխէ։

Պատրաստութեան պատմութենէն ետքը ուրեմն բնականապէս բաշխելու պատմութիւնը կու դայ։

Առաջինը կ'ըսուի Մարսողութիւն։ Եւ այս մամացին պատմութիւնն է՝ որ բժամատով ու ցուցամատով կը սկըսի, այն ատեն՝ որ զեռ անտեսանելի է, և մեր ուտելեաց հազարումէկ բանտերուն մէջ արգիլած, և վերջը կրծոց խողովակին մէջ կը լմննայ. երբ աղեաց փորձութիւններու մէջ կենցազավարելով՝ իր կապերը կը լուծէ, կը մաքրուի, կը դտուի և արեան մէջ կը նետուի, զնոյնը վերանորոգելու համար։

Երկրորդը կ'ըսուի շրջագայութիւն։ Եւ է արեան պատմութիւնը, այն անխոնջ սուրհանդակը՝ որ անդադար կը շրջի, մարմնոյն միջէն բոլորչի շրջան մը ընելով, այսինքն շարունակ մի և նոյն ճամբէն դառնալով, սրտէն ելլելով ու նորէն սիրտ դառնալով, սիրտ մտնելով ու դարձեալ անկէ ելլելով, և այսպէս միշտ ցմահ։

Մարսողութեան պատմութիւնն որ հիմա լմնցուցինք, առանց մասնաւոր խառնակութեան ծայրէ 'ի ծայր հանդարտութեամբ շարունակուող պատմութիւն մըն է։

Բայց այդ շրջագայութեան պատմութիւնն՝ որ պատմենք պիտի, ուրիշ պատմութեան մը հետ կը խառնուի, ուսկից՝ պատմած ժամանակը՝ զինքը բաժնել կարելի չէ, թէպէտ և հիմնովին երկուքը մէկմէկէ բոլորովին որիշ են։

Արիւնը երկու շրջան կ'ընէ, ստոյգն ըսելու համար. Ա. մէկ մը մեծ, որ մարմնոյն ծայրերէն սիրտը կ'երթայ և սրտէն՝ ծայրերը. Բ. մէկ պղտիկ մը, որ

սրտէն թոքերը կ'երթայ , և թոքերէն սիրտը : Թոքոց մէջ շրջելով մեր շնչած օդուն կը հանդիպի , և հոն՝ օդուն և իր մէջ երևակայութենէ շանցած հետաքրքրական բան մը կը հանդիպի , առանց որուն արիւնը և ոչ հինգ վայրկեան մարմինը կրնայ մնուցանել : Այս բանիս շնչառութիւն անուն տուեր են , որ ինքնիրեն կը մեկնուի :

Մարտողութիւն , շրջագայութիւն և շնչառութիւն , երեք պատմութիւնն ալ մէկտեղ միացած՝ մէկ ամբողջ մը միայն կը կազմեն Մննդառութիւնը կամ մնուցանելու գործողութիւնը :

Եւ այս ամենայն 'ի սկզբան ուտել կոչեցի , որպէս զի շատ մը մեծաձայն բառերով զքեզ չխրտեցնեմ . բայց հիմա որ կը սկըսիս գիտուն ըլլալ՝ պէտք է որ գիտնոց գործածած բառերուն ալ վարժիս , մանաւանդ անանկ նուազ զարհուրելի եղածներու :

Ուրեմն յաջորդ անգամուն շրջագայութիւնը պիտոր պատմեմ , և սկըսիմ պիտի սրտէն . որ՝ ստամոքսը ինչ է մարսողութեան՝ նոյն է ինքն ալ շրջագայութեան , որ է ըսել՝ տէրը : Քեզի պէտք չունիմ սորվեցնելու՝ որ սիրտը մեծ ոմն է : Ամենէն տգէտներն իսկ իր վրայ պատկառանք կը խօսին , և վստահ եմ հիմակուընէ՝ որ իր պատմութենէն ախորժիս պիտոր :

Ունիս դու ալ իմ զգացմունքս , սիրելի դու : Ուրախ և շատ գոհ եմ՝ որ զքեզ ինչուան հոս հասուցի , և կարող եմ քեզի հետ առ վայր մը կանկ առնուլ մեր հիմա մտնելու նոր աշխարհին դուռը , ինչպէս ճանապարհորդ մը որ սահմանագլխի մը եղերքը կը նստի : Ո՞րչափ ճամբայ քալեցինք այն օրուընէ սկսեալ որ ձեռքէդ բռնեցի զքեզ այդ պզտի մարմնոյն ներսը պտըտցնելու , զոր 'ի գործ կ'ածէիր առանց զան ճանչնալու : Ո՞րչափ բան սորվեցանք , և որչափ գեռ կը մնայ մեզի սորվելու , որ մնքէդ իսկ չանցնիր : Գիտես արդեօք որ առջիս նայելով զրեթէ զարհուրէի պիտի , եթէ սրտիս և քեզի սորվեցնելու

փափագիս չվստահէի : Մարդիկ սիրելը , կը տեսնես , մեծ ուժ մըն է , և երբ մութի ինկող մեկնութեան մը դժուարութենէն կանկ կ'առնում , բաւական է որ աշացս առջին քու անմեղ ժպիտ գլուխդ զնեմ , ուր շուտով արթըննալի հոգի մը կը նիրհէ , մէկէն դժուարութեանս լուծումը կը գտնամ :

Եւ համրկ է արդեօք քեզի այս ալ ըսել . միայն քեզի համար չէ որ կ'աշխատիմ : Ամենքս ալ աշխարհիս վրայ անոր համար ենք՝ որ մէկմէկու համար մտածենք ու հոգանք , և իմ ջանալովս որ լրյար մտացդ մէջ ծաթէ և աղէկ սկզբունքները սրտիդ մէջ արմատանան , անոնց վրայ ալ մտածած կ'ըլլամ որոնց օր մը դու ալ նոյն ծառայութիւնը պիտոր ընես , եթէ ես 'ի քեզ յաջողութեան բարեբաղդութիւնն ունենամ : Այս բանս ընելու է , անանկ չէ : Զանաս պիտի անշուշտ օր մը անոնցմէ մէկն ըլլալու՝ որ միայն իրենք իրենց համար շեն ապրիր , այլ աշխարհիս միջէն անցնելով անոր բան մը կու տան : Հաւտաինծի որ մեր այսօրուան օրը աղէկ շահեցուցած կ'ըլլանք , եթէ այս մամացին պատմութենէն օգուտ մը քաղած ըլլաս :

Կը շարունակուի :

Բարոյական և քաղաքական տնտեսութիւններին :

(Տես Հա . Իլ , Երես 102)

Է . ԽՈՍԿԵՑՈՒԹԻՒՆ

Հաշասարակցութիւն շահուց ՚ի մարդիկ . ամենայն ոք իր բարիքը խնդրելով լնկերութեան բարոյան օգնական կ'ըլլայ :

Վերջին խօսակցութէն եսքը տասնուհինգ օրուան մէջ յուզմունքը հետզհետէ աճեցաւ . ցորենոյն զինը յունուարի սկիզբը սաստիկ բարձրացեր էր և երկայն ատենէ 'ի վեր այդ բարձրութեան